

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

Սեպտեմբերի 25-ին, առավոտյան ժամը 4-ին, վախճանվեց հայ ազատամարտի գիտնական, բանասեր, լեզվաբան և գրականագետ, ազգագրիկոս Մանուկ Քաչատուրի Աբեղյանը։

Ազգագրիկոս Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Հին-Նախիջևանի Աստաղատ գյուղում։ 1885 թ. ավարտել է Եկորզյան ճեմարանը։ 90-ական թվերին նա ուսել է Եվրոպայի մի շարք համալսարաններում։ 1898 թ., ավարտելով Ենայի համալսարանը, ստացել է փիլիսոփայությունից դոկտորի աստիճան։

Տասնևութ տարեկանից մինչև իր կյանքի վերջը Մ. Աբեղյանն զբաղվել է գիտական և մանկավարժական աշխատանքով, պաշտոնավարելով իրրև հայ լեզվի և գրականություն ուսուցիչ և դասախոս Էջմիածնի ճեմարանում, Շուշու Թեմական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսյան և Հովնաթյան դպրոցներում, Կովկասյան համալսարանում, ապա Երևանի ԻՈՒՀ-երում, մասնավորապես Պետական համալսարանում, որի հիմնադիրներից մեկն է եղել նա։ Տարիների ընթացքում նա պատրաստել է հայագիտության բազմաթիվ կադրեր։

Երիտասարդ տարիներից Մ. Աբեղյանն աշխատակցել է հայ պարբերական մամուլին և դիտական հանգիստներին, միաժամանակ ցուցաբերելով հասարակական լայն գործունեություն։

Մ. Աբեղյանի գիտական-մանկավարժական և հասարակական աշխատանքները մեծ ծավալ են ստանում Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրից։ Սովետական կարգերը նա ողջունեց հայրենասերի իր մեծ սրտով։ 1925—30 թ. թ. նա եղել է Հայաստանի Գիտություն և Արվեստի ինստիտուտի նախագահ, այնուհետև մի շարք դիտահետազոտական հաստատությունների գիտական խորհուրդների գործունյա անդամ։ Այս տարիներին է հինց, որ նա մեկը մյուսի ետևից լույս է ընծայել իր մեծարժեք գործերը — «Հայոց լեզվի տեսություն», «Հին ժողովրդական գուսանական երգեր», «Հայոց լեզվի տաղաչափություն», «Սասնա Ծռեր» և այլն։ «Սասունցի Դավիթ» մեծ էպոսի հավաքման, ուսումնասիրության և հրատարակման գործում անգնահատելի է ակադեմիկոս Մ. Աբեղյանի մատուցած ծառայությունը։ Լույս է տեսել արդեն նրա «Հայոց հին գրականության պատմություն» երկհատորյակի առաջին սովորական հատորը, որն ընդգրկում է հայ գրականության պատմությունը սկսած հնագույն շրջանից (6-րդ դար մ. թ. ա.) մինչև Գրիգոր Նարեկացին (10-րդ դար) և որը նա հիմնականում պատրաստել է Հայրենական պատերազմի օրերին։ Անավարտ մնաց երկրորդ հա-

տորը, որի վրա նա աշխատում էր մինչև իր կյանքի վերջին օրերը և որը նա հասցրեց մինչև 14-րդ դարը:

Մեծ է այն ժառանգությունը, որ թողել է մեզ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը: Մեծ է ոչ միայն կապիտալ աշխատությունների, ստվար և ծանրակշիռ հատորների քանակի տեսակետից, այլ առավել ևս որակի տեսակետից:

Մանուկ Աբեղյանին նեք պարտական մեր հին զրականության բուն էություն բացահայտմամբ, իրեն մաքառման դրականություն, իրեն օտարերկրյա (պարսկական, արաբական և այլն) բռնապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական դարավոր և անդուլ պայքարի մի գրականություն:

Մանուկ Աբեղյանն է պատկերել իր ամբողջ հակայական հասակոփի մի՝ միջնադարյան մեր մեծ բանաստեղծին, Դրիգոր Նարեկացուն, դրսևվարել նրա արվեստի ներությունները, նրա հույզի խորությունը, նրա լեզվի անհուն հարստությունները:

Մանուկ Աբեղյանն է լույս աշխարհ հանել ժողովրդի հոգու խորքերից մեր անմահ էպոսը—«Սասունցի Դավիթը», խորը և մանրագնին ուսումնասիրել այն, նա է հավաքել և հետադոտել գուսանական երգերը, նա է մեր ուշադրությունը բեռել ժողովրդական խաղիկներին վրա:

Մանուկ Աբեղյանի պայծառ, հստակ միտքն է առաջին անգամ բացահայտել մեր նոր կյանքի սկիզբը—վերածնությունը, ցույց տվել, որ վերածնության դրականությունը մեծագույն մի շարժում է, առաջխաղացում, կրոնական աշխարհայեցողությունից ազատագրման, կյանքի ու մտածողության աշխարհականացման անհրժեշտ մի խորացում ու ծավալում, անկանդ զարգացում դարից դար, հեղինակից հեղինակ:

Մանուկ Աբեղյանն է բնութագրել մեր հին ու միջին դարերի հեղինակներին՝ Պրեմնացի ու Եղիշե, Նարեկացի ու Ֆրիկ, Ներսես Շնորհալի ու Առաքել Սյունեցի՝ խոսքի գեղարվեստական արժանիքները: Նրա հզոր մտքի առջև են բացել իրեն դադանիքները շարականները, իր պատմա-բանասիրական փայլուն հետադոտության մեջ նա է \ լցույց տվել հոգևոր երգի ստեղծման աղբյուրները, զարգացումը, զարգացման սահմանները:

Նա անհունորեն սիրում էր հայ ժողովուրդն ու նրա կուլտուրան, տիրացել էր նրա հին ու նոր լեզվին քաղառիկ հմտությամբ ու նա էր, որ այդ լեզվի բանաստեղծական թովչանքը կարողացավ վերածել օրինաչափություն հայտարերոգ թվերի ու աղյուսակների իր «Հայոց լեզվի տաղաչափություն» հայտնի աշխատության մեջ: Մանուկ Աբեղյանը հայկական տաղաչափության մասնադետ էր ու միաժամանակ բառարանագիր, նա զրականության ու միաժամանակ հայոց լեզվի տեսաբան էր, նա ֆուլկլորիստ էր ու միաժամանակ զրականության պատմաբան: Մանուկ Աբեղյանն այն դարավոր հուժկու ծառն էր, որի բունը զրկելու համար անհրաժեշտ է, որպեսզի բազմաթիվ մարդիկ պարզեն իրենց ձեռքերը:

Սկզբունքի ու հետևողականության մարմնավորում էր Մանուկ Աբեղյանը: Նա գյուղացի էր ծնվել և մինչև կյանքի վերջը՝ իր անարատությանը և առողջ դատողությամբ՝ պահպանեց ժողովրդից ժառանգած իմաստությունը: Հայ ժողովրդի հարադատ պավակն էր նա իր կուռ մտածողությամբ, պարտքի իր հավատարմությամբ, անհողողդ իր կամքով:



Մանուկ Աբեղյանը պետական մտածողությամբ տողորված մեծ քաղաքադի-հայրենասեր էր: Հայրենական պատերազմի օրերին նա լրիվ կատարելիք պարտականությունը ժողովրդի, հայրենիքի ու պետության հանդեպ: 80-ամյա հասակում նա գրեց հայոց հին գրականության պատմության կտավիտալ հատորը, որն իր նախընթացը Հունի մեր բանասիրության պատմության մեջ:

Մանուկ Աբեղյանը մեծ հումանիստ էր: Նա անհունորեն կապված էր կյանքի հետ: Մինչև վերջին րոպեն նա շփվում էր մարդկանց հետ, անդիմադրելի պահանջ էր դա նրա համար, մարդ տեսնելուց աշխուժանում էր նա: Ու մինչև վերջին րոպեն էլ նրա հգոր միտքը շարունակում էր աշխատել—ձեռքն էր, որ այլևս չէր հնազանդվում նրան: Մահը խլեց մեկանից միայն նրա մարմինը, բայց անգոր էր խլելու նրա միտքը, նրա պորձը, նրա ժառանգությունը, որ այսօր մեր բոլորիս սեփականությունն է, մեր հարըստությունը, սովետական հոգևոր մեծ գանձարանի մի արժեքավոր բաժինը:

Հայաստանի կառավարության որոշմամբ Երևանի Մանուկ Աբեղյանի տունը հռչակվեց հայոց գրականության թանգարան: Պատվալոր է այդ որոշումը ու միաժամանակ պարտավորեցուցիչ լինոտիտուտի համար: Այդ նշանակում է ընթանալ Մանուկ Աբեղյանի լավագույն տրագիգիաներով և խորացնել այն, այդ նշանակում է ունենալ մեծագույն կամք՝ ճշմարտության տիրանալու, այդ նշանակում է Մանուկ Աբեղյանի պես անհունորեն նվիրված լինել իր հայրենիքին և լիովին արդարացնել իրեն սովետական մեծ իրականության առջև:

Անկադեմիկոս Մ. Աբեղյանի բեղմնավոր գիտական ուղին, նրա մոկունությունն ու կամքը գիտական պրոբլեմներ լուծելու ասպարեզում՝ օրինակ կծառայեն Սովետական Հայաստանում աճած բազմաթիվ գիտական աշխատողների համար: